

12760

891.99

2-91

1913

891.99

2-91

my.

В. П. ГИРЬСОВСКИ

387

ՈՎ Է ՄԵՂԱԽՈՐԸ.



2003

А. А. ГУКАСЯНЪ

КТО ВИНОВАТЪ?

1008 / 35219

ԲԵՐԼԻՆ,
Տպարան Ս. Թ. Շախբադեանի

Типографія С. Т. Шахбагова, Баку.
1913

32860 - 4. 6.

15333-58

Ո՞Վ Է ՄԵՂԱԽՈՐԸ.

Ա.



- Վերջապէս թոյլ տուր ինձ, հայր:
- Ոչ, զաւակս, չեմ կարող:
- Մինչև երբ, հայր, պէտք է համբերենք:
- Զաւակս, մինչև որ կը գայ ժամանակը, այն ժամանակը, որ ամբողջ գիւղացիք կըողոքեն նրա դէմ:
- Ուրեմն ես սպասեմ, մինչև որ գիւղացիք բողոքեն նրա դէմ:
- Այո, զաւակս:
- Ոչ, հայր, ահա եօթ տարի է ասում ես. յոյս ունեմ, յոյս ունեմ, նա չի օգտուիլ, նա էլ կզրկւի, ինչպէս զրկեց մեզ. բայց ինչպէս նա զրկւի, երբ որ նրան զրկող չկայ:
- Զաւակս, նրան կը զրկի Աստուած և ուրիշ ոչ ոք:

—Հայր իմ, բաւական է, կատակ մի անիր. ինչ-պէս թէ Աստուած էլ կզրկի նրան, բայց ինչո՞ւ չի զըրկում այսքան ժամանակ:

—Զաւակս, կը գայ ժամանակ, որ կզրկւի: Ուրեմն սպասենք նրա մահւան, որ ասենք, զրկեց և չը կերաւ:

—Չէ՞ որ մինչև հիմա կերել է և ուտում է այժմս առանց կասկածանքի:

—Այո, դաւակս, կերել է և ուտում է, բայց նրա զաւակները օգուտ չեն տեսնի այդ կարողութիւնից: Է՛հ, մարդ քանի ծերանում է, այնքան խելքը պակասում է:

—Դու ուղղակի յուսով ես ապրում և ուրիշ ոչինչ. ես քեզ չեմ լսիլ, հայր, ես իմ իմացածը կանեմ և ուրիշ ոչինչ: Նա մեր արիւն-քրտինքով աշխատածը մեր գլխին տայ, առնի երկրորդ անգամ, տասը մասնէթ փող տայ մուրհակով, ժամանակին առնի իր թուկոսով և մուրհակը կորած համարելով պահի ու երկրորդ անգամ գայ մեզանից յիսուն մանէթ առնի: Թէ յիսուն տոկոս հաշւած տասն ըուրլին այսքան է անում: Նա գայ մեր տունը-տեղը հաւաքի, տանի, մեզ թողնի այս դրութեան մէջ: Մեզ նմանների պէս նա հարիւր տուն քանդած կլինի: Մի քանիսին ես ճանաչում եմ. նրանք աւելի վատ դրութեան մէջ են, քան թէ մենք: Չէ՞ որ այդ բոլորի պատճառը նա է. չէ՞ որ նա է մեզ այս դրութեան մէջ թողնողը:

—Զաւակս, հանգստացիր:

—Ոչ, հայր, ես գնում եմ ընկերներին մօտ. ես

բոլորին վաղուց արդէն յայտնել եմ. նրանք են ինձ կատաղեցրել, որ ես առաջնորդեմ իրանց: Իմ ընկերները ինձնից աւելի են բարկացած նրա վրայ. նրանք ամեն ինչ պատրաստել են, որ ամեն բան անեն, միայն թէ նրանց առաջնորդը ես լինեմ, որովհետեւ ես անվախ եմ:

—Զաւակս, դու չարացած ես, քո աչքերը արիւնով լի են, դու նրան սպանել ես ուզում:

—Ոչ, հայր, իմ արդար թեւս նրա արիւնով չեմ շաղախիլ, լաւ իմացիր. ես կիմանամ, ինչ կանեմ: Այնքան լաւ ընկերներ ունեմ. նրանք հովիւներ են, ես էլ ամեն օր նրանց հետ անտառ եմ գնում: Ամեն ինչ ձեռք, կտրած է, մնացել է կարելը. այդ էլ կանենք: Միայն դու յուսով չապրես:

Ոչ, զաւակս, ես եօթ տարի է, որ յոյսս չեմ կըտրել, ասել եմ. մի անգամ մէկը կկանգնի նրա կողորդին, ամեն ինչ կառնի ձեռքիցը և կվերադարձնի մեզ մեր արիւն քրտինքով աշխատածը: Փառք Աստուծոյ, որ այդ անուր իմ որդին է: Զաւակս, տեսնում եմ, որ էլ չես հանգստանալու: Միայն ինչ որ անես, զգո՛յշ եղիր. քեզ կըռնեն, կձգեն բանտը, քեզ կխլեն ինձնից:

—Ոչ, հայր:

—Զաւակս, դատաւոր Սեփօն նրա աջի թեւն է. նա կարող է բռնել քեզ:

—Այդ էլ գիտեմ, հայր, ամեն ինչ իմացել եմ, յետոյ եմ սկսում: Ասում են. քսան անգամ չափիր, յետոյ մի անգամ կտրիր: Ես էլ այդպէս եմ արել: Քանի-

քանի անգամ տեղեկութիւն եմ իմացել ամենքի մասին. հիմա բոլոր չարագործներին գիտեմ և լաւ ճանաչում եմ: Ոչ մի կասկած չկայ, որ ես զգոյշ եմ: Պէտք է առաջ Սարգսեանին զրկեմ այդ կարողութիւնից, ինչպէս նա մեզ զրկել է, հայր: Ա՛խ, ինչպէ՞ս մօռանամ ես այդ գազանի չարագործութիւնները:

— Ոչ, զաւակս, մոռանալու բան չի այդ անզգամի արարքը: Լաւ, տեսնենք, թէ ինչպէս կմարսես, Սարգսեան:

— Բաւական է, հայր իմ, էլ խօսելու կարիք չկայ. վաղը կգնամ ու կիմանամ անելիքս: Այժմ մի քիչ քնեմ, հանգստանամ: Առաւօտեան շուտ արթնացրիւ ինձ, հայր իմ:

— Զաւակս, Արտեմ-ջան, մէկ էլ եմ ասում. հանգըստացիր:

— Դրա մասին մի մտածիր, հայր: Զե՞ս ուզում, որ ազատ ապրենք, առանց չարագործի:

— Ես կուզեմ, որ ուրիշները անեն, ոչ թէ դու:

— Եթէ ես չանեմ, ուրիշներն էլ կարող են չանել: Հարկաւոր է, որ ամենքս աշխատենք չարիքի առաջն առնելու համար:

Արտեմը պառկեց քնելու: Հայրը դուրս գնաց և ընկաւ մտածողութեան մէջ:

— Լաւ եղաւ, որ հիմա չգնաց: Ասաց, որ գնում է ընկերներէ մօտ, ընկերները նրան սպասում են: Ա՛խ, Աստած, մի իմանամ զրա ընկերներին, սովորեցնեմ, որ այդ բանը չանեն, — էլ մեռնեմ էլ, հոգս չեմ ունենալ, միայն թէ հանգստանամ այդ մտածմունքից,

թէ չէ զաւակիս ինձնից կխլեն: Աւելի լաւ է ամեն ինչ փչանայ, քան թէ իմ զաւակիս մի մազը:

Բ.

Սարգսեանը օրէցօր կատաղում, չարանում էր գիւղացիներէ վրայ: Ամեն օր նրա երկու-երեք ոչխարը տուն չէին գալիս: Հարցնում էր հովւից, թէ որտեղ են ոչխարները, բայց մի որևէ դրական պատասխան չէր ստանում: «Միամիտ եղիր, կփնտռես», — ասում էր հովւիւր: Բայց Սարգսեանը ինչպէ՞ս միամտանար, քանի որ ամեն օր ոչխարները պակասում էին: Հինգերորդ օրն էլ չեկաւ կովը, վեցերորդ օրը՝ եղը: Սարգսեանը աւելի ու աւելի դայրացաւ և կատաղեց: Ի՞նչ անել: Ինքը ոչինչ չէ կարող. մնում է միայն դիմել դատարանին, թէ չէ ամեն ինչ ձեռքից դուրս կը գայ: Եօթերորդ օրը Սարգսեանը ներկայացաւ դատաւորին — Սեփօյին և ասաց.

— Սեփօ՛, Աստած կը սիրես, տունս-տեղս քանդեցին, ոչխարներս, կովերս, հզներս կերան, օրական մի-քանիսը տուն չեն վերադառնում: Հարցնում եմ հովւից, — ասում է. կորել է, սարից ընկել է: Մի՞թէ միայն իմ է սարից ընկնում: Ասածու աչքը իմ ապրանքը տեսաւ այդքան հօտերի մէջ:

— Սարգսեան, — պատասխանեց Սեփօն, — լաւ իմացիր ամեն ինչ. ամենքը, թէ հասակաւորները և թէ երեխաները, քո մասին են խօսում, քեզնից ուզում են խլել կարողութիւնդ, ինչպէս որ դու խլեցիր նը-

րանցից, մինչև անգամ հին ու վճարած մուրհակներով: Այժմ նրանք ուզում են յետ առնել քեզից նրանցից գողացածը և ուրիշ ոչինչ:

— Սեփօ, եթէ դու էլ իմ մասին այդպէս խօսես, ինձ լաւ հացի կհասցնես: Չէ՞ որ քեզ հարկաւոր է իմ կողմը պահել:

— Սարգսեան, որքան մեղանչեցի, բաւական է, էլ աւելի չեմ կարող, քանի որ ամբողջ գիւղն է կանգնել քո դէմ: Ուզում ես ի՞նձ էլ քեզ հետ խայտառակել:

— Հա՛, Սեփօ: Այն ժամանակ լաւ էր, որ փողերն ու ապրանքները նրանցից ստանալիս կէսը դու էիր վերցնում, կէսը ինձ տալիս: Այն ժամանակ լաւ էր, հա՛, իմ կողմն էիր խօսում, իսկ այժմ նրանց կողմը, հա՛: Լաւ, երբ որ ինձնից խլեցին իմ կարողութիւնը, ես պէտք է յայտնեմ, որ դու ես իմ ընկերը, դու ես ինձ սովորեցրել, որ այդ կեղծ, հին ու վճարած մուրհակներով կրկնակի փողեր ստանամ, որպէսզի քեզ էլ այն անեն, ինչ որ ինձ են անում:

Սեփօի կարմիր դէմքը սպիտակեց. նա այլևս ոչինչ չը կարողացաւ խօսել: Էլ ի՞նչ խօսէր, քանի որ Սարգսեանի ասածը ճշմարիտ էր, ինքը աւելի էր մեղաւոր, քան թէ Սարգսեանը: Ինչո՞ւ էր թող տալիս Սարգսեանին խլել խեղճ մարդկանց եղած-չեղածը, ինչո՞ւ ուրախանում էր, որ միևնոյն մուրհակով երկ-րորդ անգամ էր փող ստացւում: Որովհետեւ ինքն էլ բաժին ունէր: Ամեն ինչ Սեփօն իր ձեռքովն է արել: Իսկ այժմ, երբ ամբողջ գիւղը դրա մասին է խօսում, նա Սարգսեանին է առաջ բերում, բայց իզուր. ինչքան

Սարգսեանի վրայ են զայրացած, նոյնքան էլ իրաւ, Սեփօի վրայ: Այդ բոլորը մտածելուց յետոյ Սեփօն ասաց.

— Սարգսեան, ես հիմա էլ եմ քո կողմնակիցը: Դու չը կարծես, թէ ես նրանց կը պաշտպանեմ, ոչ. ի՞նչպէս կարելի է այդպէս անել: Ես իմանում եմ, թէ ինչ կանեմ: Այսօր Մատթէոսի որդուն բռնել կտամ, կուղարկեմ բանտը, որպէսզի ուրիշները վախենան ու այլևս դրա մասին չխօսեն: Ինչ անում է, Մատթէոսի որդի Արտեմն է անում. շատ կատաղածն է:

— Սեփօ, յոյսս դու ես, թէ չէ տուես-տեղս կքանդեն:

— Էլ չմտածես դրա մասին, Սարգսեան. գնա՛, հանգիստ տեղդ նստիր, ես ամեն ինչ կանեմ, ամեն ինչ կկարգադրեմ:

Սարգսեանը դուրս գնաց, հաւատացած, որ Սեփօն ամեն ինչ կարող է անել, որովհետեւ գիւղացիք Սեփօից դողում էին:

— Սեփօն խորասուզեց մտածմունքի մէջ: Ի՞նչ անել. նա չէր կարող գիւղացիների կողմն անցնել և ոչ էլ Սարգսեանի: Միակ ելքն էր— ձգել Արտեմին բանտը, որպէսզի մնացածները վախենան ու լռեն:

Սեփօն չաւուշին ուղարկեց Մատթէոսի տունը, հրամայելով բերել Արտեմին դատարան և առանց հարց ու փորձ անելու բանտարկել: Չաւուշը Արտեմին գտաւ տանը և խնդրեց զնալ դատարան: Արտեմը հօրը ականջին ասաց.

— Հայր, եթէ մինչև երեկոյ ես չվերադարձայ դատարանից, իմ ընկերներին յայտնիր:

—Լաւ,—ասաց Մատթէոսը:

Արտեմը դատարան դալուց յետոյ Սեփօի հրամանով անմիջապէս բանտարկւեց առանց որևէ քննութեան:

Գ.

Երեկոյեան Մատթէոսը վերցրեց ձեռնախայտը, դուրս գնաց փողոց սպասելու որդու վերադարձին: Երկար սպասեց, լեռներից հօտերը վերադարձան, բոլորովին մթնեց, ամեն ինչ հանգստացաւ, բայց Մատթէոսի որդին չը վերադարձաւ: Մատթէոսի սիրտը վրդովւեց, նրա ձեռները սկսեցին դողդողալ: Նա չգիտէր, ինչ անել: Վերջապէս լալով մօտեցաւ Արսէնի տանը և սկսեց դուռը ամուր ծեծել: Արսէնը գոռաց. «Տիկ հո»:

—Դարձեալ Սարգսեանը կլինի,—մտածեց Արսէնը,—որովհետեւ այսօր երկու ոչխարի գլխին քար գցեցինք: Լաւ քէֆ արեցինք, բայց ափսոս, որ Արտեմը այնտեղ չէր:

Դուռը մէկ էլ ծեծեցին: Հովիւ Արսէնը գոռաց. «Տիկ հո» ու լսեց մի աղերսալի ձայն. «Բաց արա դուռը»: Արսէնը վերցրեց ձեռնափայտը, կանչեց շանը, գնաց, բաց արեց և տեսաւ Արտեմի հօրը:

—Մատթէոս ապեր, ինչո՞ւ ես լաց լինում:

—Որդիս, Արտեմիս տարան:

—Ո՞վ, Տիկ, ասա:

—Չաւուշը կէսօրին տարաւ դատարան, որտեղից

այլեւս չվերադարձաւ: Արտեմը գնալուց առաջ ասաց ինձ. «հայր, եթէ մինչև երեկոյ չեկայ, ընկերներիս յայտնիր»:

—Լաւ, լաւ, ես հասկացայ, դու գնա:

Մատթէոսը գնաց, իսկ Արսէնը ձեռնափայտը ուսին դրած, շունը յետևից արած, գնաց ու բոլոր ընկերներին յայտնեց: Ընկերների թիւը հարիւրի չափ կլինէր: Բոլորը հաւաքւելուց յետոյ Արսէնն ասաց.

—Ընկերներ, Արտեմին բռնել են, գցել բանտը: Լաւ հասկացէք, մեզ էլ են բռնելու, այդ յայտնի բան է: Այդ բոլորի պատճառը Սարգսեանն է, իսկ անողը՝ Սեփօն: Միակ մեղաւորը նրանք են: Բոլորովին չը վախէք: Ինչ ասեմ, պէտք է կատարէք: Միմեանց հաւատարիմ եղէք և ոչ ոքի խօսքի չլսէք, բացի ինձանից: Ընկերները խմբովին ասացին.

—Համաձայն ենք, համաձայն ենք, ասա, ինչ որ ուզում ես: Մեզ հարկաւոր է այդ չարագործներին բռնել, իսկ ամենից առաջ՝ Սեփօին: Դէհ, գնանք:

Բոլորը միասին վազեցին դէպի Սեփօի տունը: Սեփօն աստիճանակով մի քանիսին թեթիկ կերպով վիրաւորեց, իսկ ինքը բռնեց:

—Մենք քեզ հետ այդպէս չէինք ուզում վարւել,—ասաց Արսէնը,—իսկ դու մեզնից մի քանիսին վիրաւորեցիր և սպանել էիր ուզում: Ուրեմն մեզ էլ հարկաւոր է քեզ հետ այդպէս վարւել:

Սեփօին տարան բանտի մօտ, մի քանի անգամ ձեռնափայտի հարւածով խփեցին գլխին և հրամայեցին հանել բանալիները: Սեփօն ինքն իրան կորցրեւ

էր, հարւածը նրան խլացրել էր, նա ոչինչ չէր հասկանում, ուստի Արսէնը հանեց նրա գրպանից բանալին, բաց արեց բանտի դուռը և նրանք մտան ներսը:

Արտեմը, տեսնելով ընկերներին, ասաց.

— Մեր հաւատարմութիւնը բոլոր չարագործութիւններին վերջ կտայ: Այժմ դուրս գանք: Այստեղ մեր տեղը չէ, այստեղ չարագործների տեղն է. թող նրանք տանջւեն, որ լաւ հասկանան իրանց արարքի իմաստը:

Այնուհետև բոլորը դուրս գնացին ու հեռացան, թողնելով Սեփօն ներսում և դուռը ամուր փակելով:

Արսէնը ամեն ինչ յայտնեց Արտեմին և, բոլորի վէրքերը տեսնելուց յետոյ, ասաց.

— Ոչինչ, երեւակայեցէք, թէ դանակով էք կտրել:

— Ոչինչ, ոչինչ,— ասացին վիրաւորւածները ծիծաղելով,— իսկ քեզ, Արտեմ, լճնչպէս բռնեցին:

Արտեմը պատմեց, թէ ինչպէս նրան բանտարկեցին:

— Իսկ Սարգսեանը այնտեղ չէր,— հարցրեց Արսէնը:

— Ո՛չ, Սարգսեանը չկար. միայն մի քանի անձանօթ երիտասարդներ էին, Սեփօն ու Հաւուշը: Ընկերներ, մեզ հարկաւոր է վաղը ամեն ինչ անել, միայն լաւ նայել, որ Սարգսեանը գիշերը չփախչի: Հարկաւոր է գիւղի մէջ պահապաններ դնել:

— Հերթով կ'նայենք,— ասացին բոլորը միաձայն:

— Լաւ, այդպէս լինի,— ասաց Արտեմը,— միայն զգոյշ եղէք, որ Սարգսեանը չփախչի: Իսկ ես գնամ. հայրս հիմա, ով է իմանում, ինչ դրութեան մէջ է:

— Հա, իսկապէս հայրդ լաց էր լինում, երբ եկաւ ինձ մօտ,— ասաց Արսէնը,— հարկաւոր է գնալ, հանգստացնել:

Արսէնը մնաց ընկերների հետ, գիւղի մէջ, որ լաւ նային, որպէսզի Սարգսեանը չփախչի: Արտեմը գնաց տուն և տեսաւ, որ հայրն ու մայրը լաց են լինում: Երբ ծնողները տեսան Արտեմին, զրկեցին նրան և սկսեցին համբուրել. նրանք իրանց որդուն կորած էին համարում: Իսկ Արտեմը ծիծաղելով ասաց.

— Հայր իմ, ինչո՞ւ էք լաց եղել. ես ռըր եմ գնացել, ես ուրիշ տեղ էի, դատարանում չեմ եղել, դատարանից շուտ եմ դուրս եկել:

Բայց այդ խօսքերը չհանգստացրին հօրը, որովհետև նա ամեն ինչ լաւ գիտէր. գիտէր և այն, որ Արտեմի սրտում ահ չը կայ:

Տեսնելով, որ հայրը չի հանգստանում, խորհուրդ է տալիս նրան գիշերը փախչել, որպէսզի Սեփօն կըրկին չբանտարկի նրան, Արտեմը ոչինչ չասաց թէ Սեփօն և թէ ընկերների վիրաւորւելու մասին և գնաց քնելու: Մտածում էր մնաց իր մտածմունքների մէջ:

Դ.

Հետեւալ օրը, վաղ առաւօտեան, Արտեմը եկաւ ընկերների մօտ, որոնք հաւաքւեցին Արտեմի չորս կողմը, սպասելու նրա կարգադրութեան: Արտեմը ընկերներից տասը հոգի ուղարկեց Սարգսեանի յետեւից,

որպէսզի նրան բռնեն և ուղղակի բերին բանտը: Ուղարկածները համարձակ կերպով մտան Սարգսեանի տունը, բռնեցին նրան և տարան բանտը: Սարգսեանը շատ բղաւեց, շատ գոռաց, որ բաց թողնեն, բայց իզուր: Բանտարկւելուց յետոյ Արաւմն ասաց Սարգսեանին.

— Դէհ, գնա, Սեփօի հետ խորհուրդ արա, իսկ մենք մեր գործը կշարունակենք:

Բանտի դուռը կողպւելուց ու հեռանալուց յետոյ Արսէնն ասաց Արտեմին.

— Մեզ հարկաւոր է ոստիկանապետին յայտնել, որ դայ, այս չարագործներին ինչ անելու է, անի, թէ չէ մենք դրանց վճիռը դնողը չենք: Արտեմ, թող մեր ընկերները մնան գիւղում, իսկ ես և դու ձի նստենք, գնանք յայտնելու ոստիկանութեանը:

Կէսօրին մօտ էր, երբ Արսէնը և Արտեմը ոստիկանապետի հետ վերադարձան գիւղը, որ ոստիկանապետի գլխանատնից այնքան հեռու չէր: Գալուն պէս քննութիւնը սկսւեց: Մի քանի ծերունիների բերին, նստացրին ոստիկանապետի մօտ, որ և սկսեց խօսեցնել նրանց:

— Դուք ճշմարիտն ասացէք. Սարգսեանը այդ բոլոր չարագործութիւններն արե՞լ է:

— Այո, արել է, — ասացին ձերերը:

— Բայց ինչո՞ւ դուք ինձ իր ժամանակին չէք յայտնել:

— Վախենում էինք, որ մեզ ծեծեն:

— Ինչո՞ւ էիք դուք վախենում նրանից:

— Նա մեզ սարսափելի ծեծ էր ուտեցնում դատաւորի ձեռքովը, — պատասխանեցին ձերերը:

— Լաւ, կանչեցէք Սարգսեանին և Սեփօին. թող գան:

Արտեմը, որ կանգնած լսում էր նրանց, վազեց բանտը և հրաւիրեց Սարգսեանին ու Սեփօին ոստիկանապետի մօտ, բայց նրանք չհաւատացին և ընդդիմացան գնալ, կարծելով, թէ նրանց ուղում են գիւղացիների մօտ տանել ծեծելու: Այդ պատճառով Արտեմըն ասաց Արսէնին.

— Դու գնա, երկու կաղակ բեր, թող ծեծելով տանեն:

Կաղակների անունը լսելուն պէս, առանց խօսելու, Սարգսեանը և Սեփօն առաջ ընկան դէպի դատարանը: Ոստիկանապետը, նրանց տեսնելով, հրամայեց կանգնել մուտքի մօտ և յետոյ առաջ կանչեց Սեփօին և ասաց.

— Դու, իբրեւ դատաւոր, պիտի մաքրես գիւղը չարագործներից, որպէսզի գիւղացիք խաղաղ ապրեն. դրա փոխարէն դու ինքդ ես չարագործութիւններ անում: Այդ բաւական չէ. դեռ երեկոյեան ատըրճանակով երիտասարդներին ես վիրաւորել: Սա քո ատրճանակն է, Սեփօ:

— Այո, տէր իմ:

— Ինչո՞ւ ես տւել գիւղացիների ձեռքը:

— Ինձնից խեցին:

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ եկել էին ինձ սպանելու, իսկ ես կամեցայ պաշտպանուել:

—Ո՛հ, ո՛հ, սուտ է, մենք գնացինք Արտեմին բանտից ազատելու,—ասացին երեկոյեան վերաւորած երկուստսարդները:

—Լսաւ, լսեցէք: Իսկ այդ երիտասարդին ինչո՞ւ համար էք զցել բանտ առանց դատելու ու յանցանքն իմանալու:

Սեփօն կարմրեց և ոչինչ չը գտաւ պատասխանելու. ճարահատեալ, իւր յանցանքը թեթեացնելու համար, ասաց, որ այդ բոլորի պատճառը Սարգսեանն է:

—Ո՛հ, դու ես,—ասաց Սարգսեանը Սեփօն և նրան մի ապտակ տուեց:—Անագնիւ, ես ոչինչ չէի ուզում անել, բոլորը դու սովորեցրիր: Միթէ դժւ չէ՝ իր գիւղացիներին կողոպտողը, նրանց եղներն ու ոչխարները խողը, որպէսզի մենք լաւ ապրենք: Դու ինձ խաբեցիր և այս օրին հասցրիր: Քիչ է հա, դրանով չես բաւականանում և այժմ ինձ ես յանցաւոր դարձնում:

—Ո՛հ, ո՛հ, սուտ է, ես մեղ չունեմ. բոլորը նա է արել:

—Ո՛հ, նա է, նա է:

—Ո՛հ, նա է:

—Լսեցէք,—ասաց ոստիկանապետը զարմացած, որ իսկապէս ամեն ինչ, որ Արտեմը ճանապարհին պատմել էր, ուղիղ է:—Երկուսդ էլ պատժի կենթարկւէք: Բաւական է, ինչքան խօսեցիք և կուեցիք: Հիմա հերթը մերն է. մենք էլ խօսենք:

Սեփօն և Սարգսեանը թէև լռեցին, բայց աչքերով միմեանց հայնոյում էին. ուզում էին իրար ու-

տել իրար պատուել:

Ոստիկանապետը ամեն ինչ իմանալուց և արձանագրութիւն կազմելուց յետոյ դարձաւ դէպի գիւղացիները.

—Դրանք հազիւ թէ ազատեն, եթէ դատարանին դիմէք: Ի՞նչ էք ասում, յարգելի գիւղացիներ. ներձւմ էք դրանց յանցանքը, թէ ոչ:

—Ո՛հ, ո՛հ, ո՛հ,—լսեց ամեն կողմից:

Ոստիկանապետը, տեսնելով, որ ոչ ոք համաձայն չէ ներել նրանց յանցանքը, ասաց.

—Ես այսօր երկար խօսելու ժամանակ չունեմ, որովհետև պէտք է անպայման գնամ ուրիշ գիւղ մի շատ կարևոր գործի համար: Առայժմ այդ երկուսին տարէք բանտ: Վաղը երկու կազակ կուղարկեմ նրանց յետևից, որպէսզի բերեն դատարան:

Դրանից յետոյ ոստիկանապետը բարձրացաւ տեղից. բոլորն էլ ոտքի կանգնեցին և ճանապարհ տուին նրան: Վերջինս երկու կազակների հետ ձի նստեց ու գնաց, իսկ Արտեմն ու Արսէնը Սեփօն և Սարգսեանին տարան դարձեալ բանտ:

Ե.

Սև ամպերը ծածկեցին երկինքը իր փայլուն աստղերով: Մութ խաւարը պատեց երկիրը: Սկսեց կայծակ, որոտմունք և սաստիկ անձրև, այնպիսի մի անձրև, որ, կարծես, երկնքից կժերով ջուր էին թա-

1008
35249

15333-58

փում: Սարսափելի էր տեսարանը, սարսափելի էր որոտմունքի դղրդոցը և կայծակի փայլատակումը: Մարդիկ սարսափից ծածկել էին տներում, կենդանիները՝ գոմերում: Փողոցները գետեր էին դարձել. որևէ անց ու դարձ անելը անհնարին էր: Սարսափը տիրել էր ամենքին. մարդիկ լուռ նստած էին տներում: Միայն բանտումը երկու մարդ չէին նկատում այդ բոլորը. դրանք Սեփոն և Սարգսեանն էին, որ անվերջ կուռում էին:

— Ո՞վ է մեզանից մեղաւորը: Թող մեռնի, թող փչանայ, գայլի բաժին դառնայ մեղաւորը:

Սեփոն և Սարգսեանը խփում էին միմեանց մութ խաւարի մէջ. խփում էին, նեղանում, նստում, հանգստում և դարձեալ շարունակում նոյնը. նրանց կուրծքը չը կար:

— Ո՞վ է մեզանից մեղաւորը, թող նա մեռնի, — ասում էր Սարգսեանը և վազում Սեփոի յետևից, բայց երբեմն նրան չէր գտնում և ինքն իր կուրծքն էր ծեծում: — Ո՞վ է մեղաւորը:

Սարգսեանը խելքը կորցրել էր. նա ուզում էր բռնել Սեփոին ու խեղդել, բայց նրան այդ չէր յաջողւում. բանտը մեծ էր, թագնւելու տեղ շատ կար:

— Մեռնի մեզնից մեղաւորը: Երեխաներս դռանը ֆայցին:

Սարգսեանը մէկ պատից դէպի միւսն էր անցնում, բայց Սեփոին չէր գտնում, որ սարսափահար թագնւել էր պատի տակ:

Վերջապէս Սարգսեանը գտաւ Սեփոին:

— Թող մեռնի մեղաւորը, — բացականչեց Սարգսեանը և ամուր բռնեց Սեփոի կոկորդից:

Սեփոն շատ աշխատեց ազատւել Սարգսեանի ձեռքից, բայց իզուր: Սարգսեանը նրան խեղդեց և ձգեց խոնաւ յատակի վրայ:

— Մեռնի մեղաւորը, մեռնի, մեռնի: Թող մեռնի և հետևողը:

Այդ ասելով, Սարգսեանը փորից յետ արնոց գոտին, մի ծայրը կապեց սիւնին, միւսը՝ իւր կոկորդին:

— Թող մեռնի մեղաւորին հետևողը, — կրկնեց Սարգսեանը և սկսեց խեղդել ինքն իրան: — Ինքը հանգիստ ապրելու համար ուրիշին զրկողը, վճարած մուրհակներով կրկնակի ստացողը թող մեռնի, — լսեց վերջին անգամ Սարսեանի ձայնը, և ամեն բան վերջացաւ:

Երկուսն էլ խեղդամահ եղան:

Առաւօտեան դէմ ամպերը յետ քաշւեցին, անձրեւը դադարեց, երկինքն ու երկիրը լուսաւորւեցին, օդը մաքրւեց: Մարդիկ փառք էին տալիս Աստծուն, որ սարսափելի տեսարանն անցաւ, և օրհնում էին արևի ճառագայթները: Այլեւ աս ու սարսափ չկար. ամեն մարդ ազատ կարող է ապրել, մանաւանդ որ երկու չարագործներն էլ բռնւած են, դրանց ծերերը անիծում էին, իսկ Արտեմին ու Արսէնին օրհնում:

Արեն արդէն մի մղոնաչափ բարձրացել էր երկնակամարի վրայ, երբ ոստիկանապետի հրամանով եկան գիւղը երկու կազակ և մի հայ երիտասարդ, որ Սեփոին և Սարգսեանին տանեն: Գիւղը գալուն պէս

կազակները կանչեցին Արտեմին, Արսէնին և մի քանի ծերերի ու ասացին նրանց, որ ոստիկանապետը հրամայել է խել այդ չարագործներից նրանց տնային կենդանիները և բաժանել այն մարդկանց մէջ, որոնցից խլած են, թողնելով միայն որոշ մասը նրանց երեխաներին:

Գիւղացիները միաձայն պատասխանեցին.

— Ո՛չ, ոչ, մեզ հարկաւոր չեն նրանց կենդանիները: Միայն ազատեցէք մեզ այդ չարագործներից. ուրիշ ոչինչ չենք ուզում: Մենք մեր արիւն-քրտինքով կաշխատենք և կապրենք, միայն թէ նրանք չլինեն մեր գիւղում:

— Լաւ, մենք այդ վճռել չենք կարող, միայն կարող ենք յայտնել ոստիկանապետին ձեր խնդիրը, — ասացին կազակները: — Դէհ, Արտեմ, գնանք:

Կազակները, Արտեմը և Արսէնը գնացին դէպի բանտը: Գիւղացիք բոլորն էլ ընկան նրանց յետևից, որպէսզի տեսնեն, թէ ինչպէս են Սեփօին ու Սարգսեանին տանում բանտից. այդ գիւղացիների համար շատ հետաքրքիր էր: Մեծ թէ փոքր — բոլորը թափւել էին բանտի դուռը, իրար հրելով առաջ էին անցնում, որ լաւ տեսնեն: Երեխաները հայհոյում, խփում էին իրար, ոտի տակ կոխում ու առաջ անցնում: Ոմանք էլ առաջ անցնողին լաւ ծեծում էին ու հայհոյում:

— Անպիտան, դու մեզանից լաւ ես, որ առաջ ես ընկնում, չես ուզում խաղաղ տեղդ կանգնել:

Ծեծւածի մայրը ամբոխի միջից վազում էր, երեխաներին հայհոյում ու անիծում: Երեխերքն էլ նրան

էին պատասխանում, միմեանց ականջի ընկնում, ինչ որ ասում ու բարձր ծիծաղում:

— Դէհ, պառաւ, բաւական է այդ երեխաներին հայհոյել: Անցիր կանանց մէջ, ամօթ է, — ասում էին մարդիկ պառաւին:

— Է՛յ, է՛յ, Արտեմը դուռը բաց է անում, նայեցէք: Ամենքն էլ հետաքրքրութեամբ նայում էն

— Ա՛խ, Աստուած, տեսնես, որ բանտից հանեն, ինչ են անելու, — ասում էր մէկը միւսին:

Վերջապէս Արտեմը կազակների հետ դուռը բաց արաւ, կանգնեց ու ասաց.

— Թող երեք ծերեր ներս մտնեն ու կանչեն դուրս:

— Լաւ, — ասացին մի քանիսները և մի քանի ծերեր մօտեցան դռանը, երեսները խաչակնքեցին և մըտան բանտարկեալների սենեակը այնպիսի մի զգուշութեամբ, որ, կարծես, վախենում էին, թէ այնտեղ սատանաներ կային, որ պիտի նրանց խեղդէին: Բանտարկեալների սենեակը մտնելուն պէս, տեսնելով Սեփօին խոնաւ յատակի վրայ ընկած և Սարգսեանին սիւնից կախած, ծերերը սարսափած դուրս վազեցին:

— Այդ ի՞նչ է, ինչո՞ւ դուրս եկաք, չէ՞ն գալիս:

— Ոչ, նրանք խեղդւած են:

Արտեմն ու կազակները մի քանի երիտասարդների հետ մօտան սենեակը, հանեցին խեղդւածների դիակները և դրսում դնելուց յետոյ նկատեցին, որ Սեփօի կոկորդէց արիւն է գնում: Կազակները նայեցին և տեսան, որ Սեփօի կոկորդէ: Երեք-չորս տեղից ծակւած է. դա Սարգսեանի մատների տեղն էր: Իսկ Սար-

գսեանը գոտիովն էր խեղդուել: Ամբոխը բացականչեց.


— Արժանի մահ, արժանի մահ:

Ծերերը մօտեցան դիակներին և առացին.

— Ո՞վ էր մեղաւորը ձեր և ժողովրդի մէջ:

Կազակները, տեսնելով, որ էլ իրանց անելու բան չկայ, գնացին, որպէսզի ամեն ինչ յայտնեն ոստիկանապետին, իսկ Արտեմը և Արսէնը մնացին կանգնած. ի՞նչ անէին, էլ անելու բան չկար: Միայն այս ու այն կողմից լսեցին ձայներ.

— Փառք Քեզ, Աստուած, փառք, որ ազատեցինք: Այսուհետեւ հեռու պահիր մեզ այդպիսիներից, Ո՞վ է մեղաւորը:



104

2013

12760

